ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2023 թվական թիվ 179-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎԻՏ ՋԱՋՈՒՌ ԵՎ ՋՐԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ՉՈՐՍ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և«դ» կետերի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 61-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 210 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի 2-ի թիվ 2, օգոստոսի 24-ի թիվ 3 և թիվ 4 ակտերը, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Շիրակի մարզային փրկարարական վարչության 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1151-93/16 տեղեկանքը և հիմք ընդունելով աղետից տուժած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ, Ջաջուռ և Ջրառատ գյուղերի թվով չորս բնակիչների դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2023 թվականի վարչական բյուջեի 10-րդ բաժնի, 7-րդ խմբի 1-ին դասի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից արտակարգ իրավիճակների (կարկտի, քամու և հրդեհի) հետևանքով տուժած, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ, Ջաջուռ և Ջրառատ գյուղերի թվով չորս բնակիչներին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ ընդամենը 270 000 (երկու հարյուր յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

22 նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի
նոյեմբերի 22 -ի թիվ 179-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ջաջուռ, Հովիտ և Ջրառատ բնակավայրերում արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած թվով չորս բնակիչների

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Ազգանուն, անուն, հայրանուն	Արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասը	Դրամական աջակցության չափը (դրամ)
1	Հովիտ	Խաչատրյան Շիրազ Մամիկոնի	2023 թվականի հուլիսի 26-ին բռնկված հրդեհի պատճառով այրվել է անասնագոմը, խորդանոցը, տան մի հատվածը, անկել են անասնագոմում գտնվող 21 գլուխ ոչխարները, 2 գլուխ հորթերը, 10 թև հավերը, իսկ անասնակերները, գարու, ցորենի 21 պարկ ալյուրը այրման հետևանքով օգտագործման համար դարձել է ոչ պիտանի:	100000
2	Ջաջուռ	Վարդանյան Դավիթ Պավլիկի	2023 թվականի օգոստոսի 18-ին տեղացած կարկտի և քամու հետևանքով վնասվել է բնակելի տան տանիքի 60քառակուսի մետր հատվածը, որից 30 քառակուսի մետրը ամբողջությամբ, կոտրվել է՝ տանիքի փայտյա ճաղավանդակը հենասյուները, ազբոշիֆրերը	50000
3	Ջաջուռ	Տոնոյան Նաիրա Սերգեյի	2023 թվականի օգոստոսի 18-ին տեղացած կարկտի և քամու հետևանքով վնասվել է տնակի թիթեղյա ծածկը: Վնասված թիթեղի մակերեսը կազմում է 18 քառակուսի մետր	40000
4	Ջրառատ	Կիրակոսյան Ցոլակ Արթուրի	2023 թվականի մայիսի 1-ին բռնկված հրդեհի հետևանքով այրվել է անասնագոմի կտուրի ծածկը 10 քառակուսի մետր մակերեսով և տանիքում գտնվող 500 կիլոգրամ ծղոտը:	80000
	Ընդամենը			270000